ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 24.06.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2022/254/1

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 30.05.2022թ. թիվ 26/26-1/9872-2022 գրությամբ «Սմարթլոջիսթիքս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի (հետայսու նաև՝ Պատվիրատու) 23.05.2022թ. թիվ 09/644 գրության հիման վրա, 30.05.2022թ. թիվ 26/26-1/9872-2022 գրությամբ նախաձեռնել է «Սմարթլոջիսթիքս» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Սմարթլոջիսթիքս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Սմարթլոջիսթիքս» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

«Սմարթլոջիսթիքս» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/254/1 ընթացակարգի շրջանակներում 22.06.2022թ. ժամը 10:55-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամը, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 23.05.2022թ. թիվ 09/644 գրությամբ, հայտնել է հետևյալը.

«Հայտնում ենք Ձեզ այն մասին, որ 2022 թվականի մայիսի 5-ին «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի /այսուհետ՝ Համալսարան/ կողմից հայտարարվել է «ԷԱՃԱՊՁԲ-2022/12-2-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով էլեկտրոտեխնիկայի, ռադիոտեխնիկայի և կենցաղային սարքավորումների գնման ընթացակարգ: Ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել նաև «Սմարթլոջիսթիքս» ՍՊ ընկերությունը:

Գնահատող հանձնաժողովի 2022 թվականի մայիսի 18-ի 2-րդ նիստի 4-րդ որոշման 4-րդ կետով «Սմարթլոջիսթիքս» ՍՊ ընկերությանն առաջարկվել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Հանձնաժողովի քարտուղարն այդ մասին մայիսի 18-ին էլեկտրոնային ձևով աճուրդների իրականացումն ապահովող համակարգի միջոցով ծանուցել է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասնցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունները:

Սահմանված ժամկետում «Սմարթլոջիսթիքս» ՍՊ ընկերության կողմից արձանագրված անհամապատասխանությունների շտկում չի կատարվել:

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշման 42-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով «ԷԱՃԱՊՁԲ-2022/12-2-ԵՊԲՀ» ծածկագրով գման ընթացակարգի հրավերների 1-ին մասի 8-րդ բաժնի 8.11-րդ կետի պահանջները՝

«ԷԱՃԱՊՁԲ-2021/12-2-ԵՊԲՀ» ծածկագրով գման ընթազակարգի գնահատող հանձնաժողովի 20.05.2022թ. 3-րդ նիստի «Սմարթլոջիսթիքս» ՍՊ ընկերության հայտը մերժվել է հրավերով, նախատեսված պայմաններին չհամապատասխանելու հիմքով:

«Սմարթլոջիսթիքս» ՍՊ ընկերության տվյալները գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով, Ձեզ ենք տրամադրում «ԷԱՃԱՊՁԲ-2022/12-2-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդին «Սմարթլոջիսթիքս» ՍՊ ընկերության կողմից էլեկտրոնային ձևով աճուրդների իրականացումն ապահովող համակարգ մինչև շտկման պահանջը և շտկման պահանջից հետո մուտքագրված տվյալների արտատպումները և ընթացակարգի արձանագրությունների պատճեները»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/254/1 ընթացակարգի շրջանակներում 22.06.2022թ. ժամը 10:55-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2022/254/1 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2022/254/1 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կարիքների համար հայտարարվել է «ԷԱՃԱՊՁԲ-2022/12-2-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցության հայտ է ներկայացրել «Սմարթլոջիսթիքս» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.05.2022թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Սմարթլոջիսթիքս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում Հավելված 1-ը /էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունը/ հաստատված չէ էլեկտրոնային ստորագրությամբ, անհրաժեշտ է ներկայացնել ստորագրված տարբերակը, բացակայում է Հավելված 1.2-ը /Իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը/, անհրաժեշտ է ներկայացնել Հավելված 1.2-ը: N 2, 4, 11, 12, 13, 14, 16, 17, 18, 23, 25, 30, 31, 33 չափաբաժինների ամբողջական նկարագրերի փոխարեն /տեխնիկական բնութագիր, մակնիշ, մոդել/ ներկայացված են սիմվոլներ, անհրաժեշտ է ներկայացնել վերոնշյալ

չափաբաժինների ամբողջական նկարագրերը: Եթե մասնակիցը հայտով ներկայացնում է մեկից ավելի մակնիշներ, ապա առաջարկվող ապրանքի «մակնիշը» սյունակում պարտադիր պետք է ներկայացնի նաև յուրաքանչյուր մակնիշին համապատասխանող մոդելը, իսկ տեխնիկական բնութագրի սյունյակում մակնիշին և մոդելին համապատասխան տեխնիկական բնութագիր համապատասխան հրավերի պահանջներին:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ Ընկերությանն առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը eauction.armeps.am համակարգի միջոցով ծանուցել է Ընկերությանն արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.05.2022թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Սմարթլոջիսթիքս» ՍՊԸ-ն չի շտկել արձանագրված անհամապատասխանությունները, մասնավորապես՝ չի ներկայացրել Հավելված 1-ի /էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունը/ էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված տարբերակը, չի ներկայացվել Հավելված 1.2-ը /Իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը/, ինչպես նաև չեն ներկայացվել N 2, 4, 11, 12, 13, 14, 16, 17, 18, 23, 25, 30, 31, 33 չափաբաժինների ամբողջական նկարագրերը /տեխնիկական բնութագիր, մակնիշ, մոդել/ և որոշում կայացրել Ընկերության հայտը մերժելու վերաբերյալ:

<u>5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 30.05.2022թ. թիվ 26/26-1/9872-2022 գրությունը, «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի 23.05.2022թ. թիվ 09/644 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:***

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի զ) պարբերության համաձայն՝ ***հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված***

դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Նույն կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Նույն կետի 11-րդ ենթակետի համաձայն՝ էլեկտրոնային եղանակով ծանուցումներն իրականացվում են տեղեկություններն էլեկտրոնային փոստին ուղարկվելու միջոցով, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների, որի ժամանակ ծանուցումներն իրականացվում են թղթային եղանակով: Հրավերով և հայտով նախատեսվում են պատվիրատուի և մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեները: Տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում դրանք ուղարկողը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ հավաստագիրը՝ զետեղված «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում, կամ տեղեկությունները (փաստաթղթերը) ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով: ***Գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:***

Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանվում է, որ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Ապրանքների գնման

դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «դ» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Այսպես, «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կարիքների համար հայտարարվել է «ԷԱՃԱՊՁԲ-2022/12-2-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, որին մասնակցության հայտ է ներկայացրել «Սմարթլոջիսթիքս» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.05.2022թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Սմարթլոջիսթիքս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում Հավելված 1-ը /էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունը/ հաստատված չէ էլեկտրոնային ստորագրությամբ, անհրաժեշտ է ներկայացնել ստորագրված տարբերակը, բացակայում է

Հավելված 1.2-ը /Իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը/, անհրաժեշտ է ներկայացնել Հավելված 1.2-ը: N 2, 4, 11, 12, 13, 14, 16, 17, 18, 23, 25, 30, 31, 33 չափաբաժինների ամբողջական նկարագրերի փոխարեն /տեխնիկական բնութագիր, մակնիշ, մոդել/ ներկայացված են սիմվոլներ, անհրաժեշտ է ներկայացնել վերոնշյալ չափաբաժինների ամբողջական նկարագրերը: Եթե մասնակիցը հայտով ներկայացնում է մեկից ավելի մակնիշներ, ապա առաջարկվող ապրանքի «մակնիշը» սյունակում պարտադիր պետք է ներկայացնի նաև յուրաքանչյուր մակնիշին համապատասխանող մոդելը, իսկ տեխնիկական բնութագրի սյունյակում մակնիշին և մոդելին համապատասխան տեխնիկական բնութագիր համապատասխան հրավերի պահանջներին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ Ընկերությանն առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը eauction.armeps.am համակարգի միջոցով ծանուցել է Ընկերությանն արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.05.2022թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Սմարթլոջիսթիքս» ՍՊԸ-ն չի շտկել արձանագրված անհամապատասխանությունները, մասնավորապես՝ չի ներկայացրել Հավելված 1-ի /էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունը/ էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված տարբերակը, չի ներկայացվել Հավելված 1.2-ը /Իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը/, ինչպես նաև չեն ներկայացվել N 2, 4, 11, 12, 13, 14, 16, 17, 18, 23, 25, 30, 31, 33 չափաբաժինների ամբողջական նկարագրերը /տեխնիկական բնութագիր, մակնիշ, մոդել/ և որոշում կայացրել Ընկերության հայտը մերժելու վերաբերյալ:

Այսպիսով՝ Կարգի 41-րդ կետով սահմանվում է, որ ***եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում <u>արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ,</u> ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով***

ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Ընդ որում՝ Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: ***Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:***

Այսպիսով՝ սույն գործի փաստական հանգամանքների ուսումնասիրության արդյունքում արձանագրում եմ, որ Ընկերությունը Կարգի 41-րդ կետի համաձայն ծանուցվել է անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ, սակայն արձանագրված անհամապատասխանությունները չի շտկել, այսինքն՝ «Սմարթլոջիսթիքս» ՍՊԸ-ն «ԷԱՃԱՊՁԲ-2022/12-2-ԵՊԲՀ» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտում, ուստի առկա են Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 30.05.2022թ. թիվ 26/26-1/9872-2022 գրությամբ «Սմարթլոջիսթիքս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և Ընկերությանն ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**